

ՀՏԴ 941 (479.243)

Հայ ժողովրդի պատմություն

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱՔԻՄ (1988-1994)
Մարգիս ԱՍԱՏՐՅԱՆ**

Բանալի բառեր՝ ժողովրդագրական գործընթաց, վերաբնակեցում, ժողովրդագրական պատկեր, ազգային անվտանգություն, ժողովրդագրական քաղաքականություն, ժողովրդագրական միտումներ:

Ключевые слова: демографический процесс, переселение, демографическая картина, национальная безопасность, демографическая политика, демографические тенденции.

Keywords: demographic process, resettlement, demographic picture, national security, demographic policy, demographic trends.

С.Асатрян

Основные тенденции демографических процессов в Арцахе (1988-1994)

Быстро меняющийся политический, социально-экономический статус, объективные и субъективные причины, связанные с новыми независимыми органами, поставили совершенно новые задачи, решение которых носили незапланированный и неорганизованный характер и которые оказали негативное влияние на общую демографическую картину Арцаха.

Поэтому решение проблем развития и укрепления Арцаха предполагает радикальное в демографической области изменение и реализацию обоснованной политики переселения. Миграция является важным стратегическим вопросом, правильная и продуктивная реализация которой даст нам возможность внести весомый вклад в социально-экономическое развитие НКР и решить проблему переселения в малонаселенные регионы.

S.Asatryan

Major Trends of Demographic Processes in Artsakh (1988-1994)

Rapidly alternating political, socio-economic status, objective and subjective reasons connected with new independent authorities brought entirely new challenges, the solution of which had an unplanned and unorganized nature, and which had an adverse impact on the overall demographic picture of Artsakh.

Therefore, the solution to the problems of development and strengthening Artsakh demands radical demographic changes and implementation of grounded resettlement policy in it. Migration is an important strategic issue, the correct and productive implementation of which will give us opportunities to contribute to the social-economic development of the NKR and solve the problem of resettlement in underpopulated regions.

Մեկը մյուսին արագափոփ հաջորդող քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացները, թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, նորանկախ պետության իշխանությունների համար առաջ բերեցին բոլորովին նոր մարտահրավերներ, որոնց լուծումները, ցավոք սրտի, ծրագրված և համակարգված բնույթ չէին կրում, որն էլ, բնականաբար, իր բացասական ազդեցությունը թողնեց Արցախի ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա:

Հետևաբար, Արցախի զարգացման ու հզորացման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է նրանում ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն, վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Վերաբնակեցումը այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է խթանել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացումը, լուծել ԼՂՀ թերբնակեցված շրջանների բնակեցման խնդիրը:

Դեռևս Սառը պատերազմի տարիներին մշակվել էր այսպես կոչված՝ «զսպման» տեսությունը, որը ենթադրում էր ռազմական, քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, հոգեբանական և այլ միջոցների ամբողջություն՝ հնարավոր ագրեսորին (մեր դեպքում Ադրբեյջանն է) ռազմական եղանակով իր նպատակների իրականացման անհնարինության մեջ համոզելու համար¹: Հետևաբար, ազգային անվտանգության տեսանկյունից և համաձայն վերոնշյալ «զսպման տեսության»՝ ժողովրդական գործընթացների համակողմանի ուսումնասիրումը և ապագայում դրանց ծրագրված վերահսկումն ու ուղղորդումը ԼՂՀ-ի համար հանդիսանում է պետանվտանգության կարևորագույն բաղադրիչ: «Վերա-

¹ Ս.Մինասյան, Ղարաբաղյան հակամարտությունում խաղաղության պահպանման մեխանիզմ. զսպման տեսությունը պատազինությունների ասիմետրիկ մրցավազքի, Անալիտիկոն, N 8 (20), օգոստոս, 2010, էջ 3:

բնակեցումը պետք է հնարավորինս արագացնել, քանի որ առանց դրա չեն ամրանա լարվածության մեջ գտնվող տարածքները: Խնդրին մեծ ուշադրություն պետք է հատկացնել, քանի որ վերաբնակեցման քաղաքականությունը ռազմավարական նշանակություն ունի, հատկապես՝ ադրբեջանցիների մեծախոսության և հարված հասցնելու սպառնալիքի պարագայում», - արդարացիորեն նկատել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը¹:

1990-ականներին տեղի ունեցած քաղաքական դեպքերը՝ ԽՍՀՄ-ի փլուզումը, նորանկախ պետությունների ձևավորումը, Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակումը, 1991-1994թթ. Ղարաբաղյան պատերազմը, ստեղծեցին ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ, որն անշուշտ, իր ազդեցությունը թողեց ԼՂՀ բնակչության թվի ու կազմի շարժընթացի, տեղաշարժերի և, ընդհանրապես, ժողովրդագրական գործընթացների վրա²:

Արցախյան պատերազմը, արտահոսքը, տնտեսական շրջափակումը արմատապես փոխեցին Արցախի հասարակական կյանքը և ժողովրդագրական իրավիճակը, ինչը նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայանալու համար դժվար պայմաններ ստեղծեց: Տնտեսությունը սկզբունքորեն նոր զարգացման ուղի սկսեց ապրել: Փոխվեցին հասարակական բոլոր հարաբերությունները, բարդացավ հանրապետության սոցիալական իրավիճակը: Պետությունն ու հասարակությունը ծանր կացության մեջ ընկան:

Ողջ պատերազմի ընթացքում Արցախի բնակչության մի մասը ստիպված տեղահանվեց: Մարդիկ իրենց ընտանիքներով գաղթում էին հանրապետության այլ բնակավայրեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն և արտերկիր: Այս ամենի ընթացքում ժողովուրդը կորցրեց իր ունեցվածքի մեծ մասը: Տեղահանվածների մի մասն այլևս չվերադարձավ հայրենիք: Այս իրադարձությունները զուգորդվեցին Ադրբեջանի Հանրապետությունից մագապործ և թալանված փախստականներ ընդունելու խնդրով, և երկիրը կանգնեց նրանց՝ ապրելու նոր հնարավորություն տալու փաստի առջև, ինչը, իհարկե, մեծ ծախսեր էր պահանջում երկրի համար դժվար, օրհասական պահին:

1991-1994թթ. հազարավոր մարդկային կորուստներ եղան, որոնց գերակշիռ մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ էին: Ի դեմս նրանց՝ հասարակությունը կորցրեց և՛ սերնդատուներ, և՛ աշխատուժ: Այլ խոսքով՝ նշանակալիորեն փոխվեց նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը, ինչը մեր պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք էր³:

Դեռևս Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակաշրջանում ԼՂՀ-ում բարձր էր ուրբանիզացման մակարդակը: Այս գործընթացը շարունակվեց նաև անկախացումից հետո: Դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների, հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքի շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: ԼՂՀ հետագա ուրբանիզացումը սպառնալիք էր ներկայացնելու ազգային անվտանգության համար: Դա կապված է բնակչության ոչ համակարգված տարաբնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ:

ԼՂՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությունը որոշակի առումով հանդիսացավ այն հիմնական խթանիչ գործոնը, որը պայմանավորեց բնակչության տնտեսական գործունեության զարգացումը հանրապետության սահմաններից դուրս՝ տարազնացության, սեզոնային աշխատանքի շնորհիվ: Մեր հանրապետության տնտեսությունը շատ մասնագետների, բանվորների խիստ կարիք ունի, որոնք իրենց ունակությունները կսկսեն կիրառել ԱՊՀ և այլ երկրներում:

Ադրբեջանի վարած էթնիկ գտումների քաղաքականությունը, ռազմական գործողությունները և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումը (դեմոգրաֆիական ագրեսիա) մեծ հետք թողեցին բնակչության ընդհանուր և ծննդի մակարդակի, բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերի վրա: Դա հանգեցրեց սոցիալ-տնտեսական նոր պայմանների վերաճմանն ու վաթարացմանը և բնակչության «ծերացմանը»: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության զար-

¹ «Անկախ», 07.11.2012:

² Լեռնային Ղարաբաղի հանրապետության առկա, Երևան, 2009, էջ 35:

³ Տես՝ Հավելված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 25 -ի N 652- Ն որոշման:

զացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերը, դրանց բնույթի փոփոխության և մի շարք նոր գործոնների ձևավորման ընթացքը, մասնավորապես շրջափակումները, Արցախի ողջ տարածքում լայնամասշտաբ պատերազմական գործողությունները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը, անժամանակ մասնավորեցումները, հապշտապ սեփականաշնորհումները և մեծ չափեր ստացած պարտադրված արտագաղթը հանգեցրին բնակչության ընդհանուր թվաքանակի և ծննդի նվազմանը:

Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող բացասական փոփոխություններն կապված էին բազմասեփականության, տնտեսության վերարտադրողական կառուցվածքի ձևախեղումների, տնտեսական նոր մեթոդների արմատավորման և, ընդհանրապես, շուկայական հարաբերությունների ընթացքի հետ, որոնք իրենց հակասական ազդեցությունը դրոշմեցին ԼՂՀ բնակչության վերարտադրության ողջ ընթացքի և օրինաչափությունների ձևավորման վրա: Արդյունքում նվազեց ծննդաբերությունը, որը և բացասաբար ազդեց բնակչության վերարտադրության վրա: Ծնելիության գործակցի նվազումը և մահացության աճը, ինչպես նաև մեծ չափեր ընդունած արտագաղթը պայմանավորեցին Արցախի բնակչության թվաքանակի նվազումը: Այսպես, եթե 1985թ. բնակչության թիվը կազմում էր 173,6 հազար մարդ, ապա 1995թ.՝ 126,4 հազար մարդ¹:

Պատերազմի տարիներին տնտեսությունը կաթվածահար վիճակում էր, իսկ զինադադարից հետո, ինչպես և սպասվում էր, զարգացման խանգարիչ պատճառներ հանդիսացան մարդկային կորուստները: 1991-1994 թվականներին հազարավոր մարդկային կորուստներ եղան, որոնց գերակշիռ մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ էին: Ի դեմս նրանց՝ հասարակությունը կորցրեց և՛ սերնդատուներ, և՛ աշխատուժ: Պատերազմի ժամանակ մոտ 66000 բնակիչներ ստիպված տեղահանվեցին իրենց բնակավայրերից: Զինադադարից հետո Արցախ վերադարձան 35000-ը: Սակայն, հաշվի առնելով, որ նրանց գյուղերը կամ լրիվությամբ ավերված էին, կամ մինչ օրս էլ հակառակորդի տիրապետման տակ են, այդ մարդիկ դարձան տեղահանվածներ: 1988-1989 թվականներին Ադրբեյջանի Հանրապետությունից ներգաղթեց մոտ 23000 մարդ (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության 15.8%-ը՝ ըստ 1989 թվականի մարդահամարի տվյալների), և պետությունը կանգնեց փախստականներ ընդունելու, նրանց օթևան և ապրուստի միջոցներ տրամադրելու փաստի առջև²:

Ադրբեյջանից Հայաստան փախստականների մի քանի հոսք է եղել: 20 հազարի հասնող առաջին խումբը ստիպված էր փախչել 1988-ի փետրվարին՝ Բաքվի մերձակա Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած ջարդերից հետո, երբ տեղացի հարյուրավոր հայեր սպանվեցին, և հարյուրավորներն էլ վիրավորվեցին: Փախստականների ներթորոշ և ավելի խոշոր ալիքը, որ ի հայտ եկավ 1988-ի ներթորոշ կեսին և շարունակվեց մինչև 1989-ի վերջը, ներառեց մոտ 215 հազար փախստական: Երրորդ ալիքը (շուրջ 45 հազար մարդ) հետևանք էր 1990 թվականին Բաքվի կենտրոնական հատվածում տեղի ունեցած բռնությունների³:

1991 թվականին «Կուլցո» օպերացիայի վերջին փուլի արդյունքում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին (ԼՂԻՄ) հարակից Շահումյանի շրջանի (շուրջ 12 հազար մարդ) և Գետաշենի ենթաշրջանի՝ ներառյալ Գետաշեն և Մարտունաշեն (շուրջ 5100 մարդ) գյուղերը, հայաբնակ տարածքների բնակիչների մնացած մասը ևս ստիպված եղավ հեռանալ բնօրրանից⁴: Ըստ տարբեր աղբյուրների՝ 1990 թ. Ղարաբաղում հաստատվել էր մոտ 30.000 փախստական, իսկ զինադադարից հետո, ճշտված տվյալներով, ԼՂՀ տարածքում ապրում էր Ադրբեյջանից բռնագաղթած 21.150 մարդ⁵:

Ներկայումս Հյուսիսային Արցախից բռնագաղթած փախստականների մեծ մասը բնակություն է հաստատել ՀՀ-ում, մի մասը ՌԴ-ում, և նրանց միայն մի փոքր մասն է վերաբնակվել ԼՂՀ-ում: Ըստ հայկական կողմի տեղեկատվության՝ ԱԽՍՀ-ից Հայաստան, ԼՂԻՄ և ՌԽՖՍՍ բռնագաղթեց

¹ Ա. Առուստամյան, *Սոցիալ-տնտեսական վերափոխումները ԼՂՀ-ում (1991-2002թթ.)*, Սեղմագիր, Եր., 2010, էջ 21:

² Տես՝ ԼՂՀ կառավարությանը առընթեր արխիվ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, 26, հունվարի 2010թ. թիվ 21 որոշում:

³ Գ. Պողոսյան, Գ. Ավագյան. *Փախստականների սոցիալական ադապտացիան*, Եր., 1996, էջ. 5-7:

⁴ Ա. Այունց, *Հարկադիր տեղաշարժը դարաբաղյան հակամարտությունում* <http://theanalyticon.com/?p=257>

⁵ ԼՂՀ հանրապետություն, 1995, 04. 02:

ընդհանուր առմամբ 167400 մարդ, 1989թ. փախստականների թիվը կազմում էր 141260, իսկ 1990թ. ընդհանուր ցուցանիշը՝ 32000 մարդ¹:

Ստեղծված տագնապալի ժողովրդագրական իրավիճակը պայմանավորված էր նաև միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության բացակայությամբ: Մակայն այդ հայեցակարգի մշակման աշխատանքներն անընդհատ ձգձգվում էին:

Այսպիսով՝ անկախության հռչակումից հետո թե՛ ԼՂՀ-ն և թե՛ ՀՀ-ն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով գտնվում էին սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, որը գնալով ավելի էր խորանում՝ ընդգրկելով հանրապետությունների կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները: Այսպես, օրինակ՝ ԼՂՀ վարչապետ Լեոնիդ Պետրոսյանի բերած տվյալներով՝ պատերազմի տարիներին ավերվել են գրեթե 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական, սոցիալական օբյեկտներ, շուրջ 7000 բնակելի շինություն, 172 կրթօջախ, 47 բուժօգնական²:

Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ խիստ նվազեց բնակչության բնական աճը: Այսպես՝ նրան 1993թ. 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմում էր 10,6 մարդ, ապա նույն ժամանակահատվածում մահացածների թիվը 1000 բնակչի հաշվով կազմեց 16,6 մարդ: Համեմատության համար նշենք, որ շարժման նախօրյակին Արցախում ծնվողների միջին տարեկան թվաքանակը 1000 շնչի հաշվով կազմում էր 22,3 մարդ, շարժման տարիներին այդ թիվը կրճատվեց գրեթե 2 անգամ³: Արդյունքում ԼՂՀ-ում խախտվում էր բնակչության սեռատարիքային համամասնությունը (տղամարդկանց տեսակարար կշռի անկում և մեծահասակների թվաքանակի հարաբերական ավելացում), նվազում բնակչության բնական աճը:

Ծնելիության գործակցի նվազումը և մահացության աճը ինչպես նաև մեծ չափեր ընդունած արտագաղթը պայմանավորեցին Արցախի բնակչության թվաքանակի նվազեցումը: Այսպես՝ նրան 1985թ. բնակչության թիվը կազմեց 173,6 հազար, ապա 1995թ.՝ 126,4 հազար⁴:

Բնակչության թվաքանակը և կազմը

Հազար մարդ

Տարիներ	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում՝	
		քաղաք.	գյուղ.
1985	173.6	82.7	90.9
1990	195.2	101.7	93.5
1991	143.3	64.1	79.2
1992	121.9	64.1	57.8
1993	123.2	71.5	51.7
1994	126.9	71.8	55.1
1995	126.4	71.2	55.2

Բնակչության բնական շարժը

Հազար մարդ

Տարիներ	Ծնվածների թիվը	Մահացած- ների թիվը	Բնակչության բնական աճը
1985	24.0	7.8	16.2
1990	17.3	7.1	10.2
1991	21.6	12.2	9.4

¹ Հայաստանը փոխակերպվող աշխարհում, ՌԱՀՀԿ, Երևան, 2006, էջ 693:

² «Արցախ», 27.06.1995:

³ ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները 1985-1996, էջ 8:

⁴ Ա. Առուստամյան, Ժողովրդագրական իրավիճակը և վերաբնակեցման քաղաքականությունը ԼՂՀ-ում (1991-2002թթ.), Հայագիտական հանդես, հ. 1, Ստեփ., 2010, էջ 96:

1992	11.6	11.2	0.4
1993	10.6	16.6	-6.0
1994	14.2	15.2	-1.0
1995	14.2	9.5	4.7

Ուստի բացասական զարգացումները կասեցնելու համար ԼՂՀ-ում պետական մակարդակով առաջ քաշվեց գործընթաց, որով սկսվեց պարբերաբար իրականացվել հասարակության, ընտանիքի, անհատի ուսումնասիրություն, որը հնարավորություն ընձեռեց գնահատել առկա ժողովրդագրական իրավիճակը և բացահայտել նրա վրա ազդող գործոնները:

Արդ, ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար ԼՂՀ իշխանությունները հիմնականում փորձեցին իրականացնել հետևյալ իրարահաջորդ գործողությունները.

1. ճանաչել ճգնաժամն առաջացնող խորքային պատճառները,
2. վերլուծել իրադրությունը,
3. մշակել և առաջարկել ճգնաժամը հաղթահարելու միջոցներ,
4. կիրարկել այդ միջոցները:

Հետևաբար 1994թ. մայիսին՝ զինադադարի հաստատվելուց հետո, կարևորագույն խնդիրներից էր հանրապետության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական պատկերի կայունացման և զարգացման հարցը:

Վերոնշյալ հետպատերազմյան սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական համալիր գործընթացների արդյունքները կներկայացվեն հերթական հոդվածներում:

Այսպիսով՝ 1988-94 թվականներին ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական մեկը մյուսին արագաթափ հաջորդող իրավիճակները, թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, նորանկախ պետության իշխանությունների համար առաջ բերեցին բոլորովին նոր մարտահրավերներ, որոնց լուծումները, ցավոք սրտի, ծրագրված և համակարգված բնույթ չէին կրում, որն էլ, բնականաբար, իր բացասական ազդեցությունը թողեց Արցախի ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա:

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս Ասատրյան – ԱրՊՀ ասպիրանտ, պատմության ամբիոն

E-mail: sargis_asatryan_2014@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, պ.գ.դ. Վ. Ավանեսյանը:

ՀՏԴ 941 (479.25)

Հայոց պատմություն

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ
ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿՋԲԻՆ
Կարինն ՀՈՎՍԵՓՅԱՆ**